



# ■ Արտ. գործոց նախարարի նամակը Մարիո Ռաֆայելին

Լեոնային Ղարաբաղի Հանրապետության արտաքին գործոց նախարար Արթուր Ղուկասեան նամակ մը յղած է Լեոնային Ղարաբաղի հարցի կարգաւորման Մինսքի խորհրդակցութեան նախագահ Մարիո Ռաֆայելին, որուն մէջ կ'ըսուի.—

«Պատիւ ունիմ ձեզի փոխանցելու դարաբաղեան կողմի նկատառումները սոյն թուականի սեպտեմբեր 28ին նախապատրաստուած եւ Մինսքի խումբի Փարիզի նիստի մասնակիցներու հաւանութեան արժանացած ՄԱԿի Ապահովութեան հորհուրդի թիւ 822 եւ 853 բանաձեւերու իրագործման անյետաձգելի միջոցառումներու նոր ժամանակացոյցի վերաբերեալ:

Միաժամանակ, տեղեկատուութեան համար կ'ուղարկեմ ՄԱԿի ընդհանուր քարտուղար Պուրբրու Ղալիին եւ ՄԱԿի Ապահովութեան հորհուրդի նախագահ պրն. Սարտենպերկին հասցէագրուած Լեոնային Ղարաբաղի Հանրապետութեան Գերագոյն հորհուրդի նախագահի պաշտօնակատար Կարէն Բաբուրեանի նամակի պատճէնը, ուր շարադրուած է ԼՂՀ վերաբերմունքը ՄԱԿի Ապահովութեան հորհուրդի 1993 թուականի թիւ 874 բանաձեւի հանդէպ:

Առիթէն օգտուելով, պիտի ուզէի ձեր ուշադրութիւնը հրաւիրել հարեւան պետութեան դեկավար Հայտար Ալիեւի շարք մը յայտարարութիւններուն վրայ, որոնց իմաստը կը յանգի այն գաղափարին, որ Ատրպէյնանը դարաբաղեան հակամարտութիւնը պիտի լուծէ պատերազմի նամբով, պիտի արտաքսէ «հայ յարձակողները» եւ պիտի վերականգնէ «իր տարածքային ամբողջականութիւնը», գոր ուրիշ ձեւով կարելի չէ հասկնալ, քան ուժի դիրքերէ Ղարաբաղի նկատմամբ հակակշռի հաստատում: Մինչեւ անոր նախագահ ընտրուիլը մենք չէինք արձագանգեր նմանօրինակ յայտարարութիւններու, խորհելով՝ որ ատոնք ընտրարշաւի մաս կը կազմեն եւ նախատեսուած են միայն ներքին օգտագործման համար:

Սակայն երդման արարողութեան ժամանակ նախագահ Ալիեւի արտասանած ճառը եւ ապա հրապարակային ելոյթները կը սպառնան ոչ միայն արգելակել Մինսքի գործընթացը, այլեւ խափանել յարատեւ աշխատանքի որպէս արդիւնք ձեռք բերուած համաձայնութիւնները, անկէ բխող բոլոր անկանխատեսելի հետեւանքներով: Ես իմ պարտքը կը համարեմ այս մասին ամենայն անկեղծութեամբ ըսել ձեզի:

Այդ շրջագծին մէջ պիտի ուզէի ձեզ իրազեկ դարձնել, որ մեր ստացած տեղեկութիւններուն համաձայն, դուք իբրեւ թէ մտադիր էք մշակուող փաստաթուղթերուն մէջ ձեւով մը յիշատակել Լաչինի մասին: Խորհելով, որ այդ տեղեկատուութիւնը անհաւատալի է, այնուամենայնիւ պիտի ուզէինք ձեր ուշադրութիւնը դարձնել այն բանին, որ մեզի համար նման քայլ մը ամբողջ շարք մը պատմական, իրաւական, տնտեսական եւ ռազմավարական բնոյթի պատճառներով բացարձակապէս անընդունելի է:

Մեզի իրաւունք կը վերապահենք յատկապէս անդրադառնալ այդ խնդրին, որպէսզի ձեզի աւելի լրիւ տեղեկատուութիւն տրամադրենք այդ հարցի վերաբերեալ»: